

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

ՆԵՐՔՈՂ Ի ՍՈՒՐԲ ԿՈՅՄՆ

(Ա տարբերակ)

Ի սոյն կարգ դասեալ իբր զմիաշար խորհրդոյ տեսակ ընդ ներքողենի խաչիդ եւ զգովեստ երգոյ Տիրուհոյդ:

Ա. Գումարք խմբից դասու երջանկացն պատուասիրաբար բանակարգ եւ բիրաբերուն գովեստի զսկզբնալոյսն կենաց գոյից ի կիցս բանից ըղձաձայնութեանց, իբր զգայական շնչաշարժ սրտին, տաղեալք զգերազանցեալն ի յանմատոյցն ծագումն լուսոյ վերադարձութիւն, եւ զանճառաքանչն հրաշից ամենաստեղծն էութեան տիրաբանեալ արարչապատմեն՝ պատճառ անկապուտ փառաց իսկութեան Հաստիչն զհաստուածոց առեալ գոյութեան:

Եւ արդ, եթէ հրափայլ եւ արագընթացն փառաբանչալք վերնաթոյնն պատգամատրալք հոգիանիւթ եւ անեղծական կենդանեալքն, որք թեպէտ եւ վեհք բնութեան կայիցս¹ ստորիցս, եւ նշոյք երկրորդ լուսոյ առաջնոյն, այլ սակայն յոյժ անտեսաբար սպասաւորութեամբ առ բնակութիւն բարի Բանին բարձրելոյն բարեգարդաբար բերկրանալք բերին. եւ նոքալք գոհաբանի սուրբն Աստուածութիւն՝ լայնաձիգ հեռաւորութեամբ, ընդարձակ միջոցաւ յաւետ անջրպետ գոլով ի նոցունց:

Ապա ո՞ր երգ պատկանագիր ի ճահ գովեստից զհպաւորն ազգակից ընտանի հարազատութեամբ զմարմնարանն Անտեսին եւ զճեմարանն Մեծին, զտաղաւարն տիրական եւ զխորանն աստուածական, զխառնարանն ճաշակման անապական խրախճանութեան², զարքարանն մաքրութեան եւ զընդունակն զգաստութեան, զնպատակն կուսութեան եւ զարիւնակն երանութեան, զհարսնարանն անլուծական անժամանակն Փեսայի, զբնակարանն հաճութեան կամաց անեղն Աստուածութեան, զայսքանեաց երանութեանց գտակ պատմել ձեռնարկեսցէ: Վասն զի ոչ միայն ի կշիռս բանի չափոյ բերանոյ ի հիւթոյ հողոյ զանգուածոյ մսեղի մարմնոյ անճառութեամբ փակեալ գտանի, այլեւ ոչ երկնայինք զարեւն զԱրարչին անհաս տնարէնութեան³ անքնին ծնող արժանապէս վերաքարոզել: Զի եթէ անձնացեալն մարդ, ըստ առաքելական ձայնին Պաղոսի, ոչ յումեքք պատմի, ապա որ զլրութիւն Բանին էութեան յղացեալ կրեաց Աստուածութեամբն ի մարմնի՝ զիս ընդ գննեսցի ի շարժութիւն շրթանց երկրեղին լեզուի ճանաչիլ: Քանզի եթէ դասք պետութեանց անմահիցն վեհից վերնոյ բնակութեանն եկեղեցեաւս իմաստասիրացն, ապա ուրեմն մեծ են առ նոսին սքանչելիք

Աղբիւրներ

A - Երևանի Մատենադարան, հմր 5558

B - Երևանի Մատենադարան, հմր 5365, ժամանակ՝ ԺԳ դ.

¹ Ա կայից

² Ա խրախճանութեանն

³ Ա տնարէնութեանն

գործոցս այսոցիկ, քան զստորայնոցս երկրածնացս բանականաց բնաւից պատմութիւնն:

Եւ արդ, երգեսցէ բանս ընծայութիւն արհնառաք փառաց տուչութեան ի բաղձանաց փափագման սրտի, որքան զարեացէ, զի եթէ երկինք զարդարութիւն Բնականիւն պատմեն, որպէս նախահարն⁴ սրբուհոյն երգեաց, եւ յանդրադարձութիւն տարագրեցելոյ տոհմին Յուդայի, տեսցեն ժողովք ժողովրդոց ըստ դիմառութեան հոգեզարդ բային զփառս անյաւղին: Իսկ ի յերեւել անձնաւոր Բանին մարմին եղեալ աղամեան կերպին, արժանաբար ըղձականութեամբ հնչեսցէ զձայն բերկրանաց բարբառոյ բանից երկիր տիրակիր՝ լծակցելով ընդ աստուածակիր երկինն վերին, ուստի խրախուսեալ հոգեւորական հրճուանաւք երկուցն դասուց ի մի հաւաքութիւն՝ տաւնեն տենչալի եւ անստուերափայլ մեծ տարեկանաւք ի զգալիսս տեսականաց եւ յիմանալիսն ծածկեցելոց: Արդ, պարեսցուք հոգեպէս տարփմամբ, բանակք բնակութեան խմբի երկնային առագաստին. զհոգեւոր հարսանեացն զիղձս քեզ, ամենասո՛ւրբ եւ արարչընկա՛լ Տիրուհի եւ Աստուածածին:

Վասն զի զանտանելին երկնի բարձրութեան եւ երկրի լայնութեան եւ ծովու խորութեան եւ անդնդային մթութեանն՝ մարմնացեալն ի քէն տերութիւն, զոր արուեստաբանեալ ի ձեւ առակաց երջանկին Յոբայ, զանբաւութիւն մեծին աճեցոյց: Ասաց զումեմնէ ասել, թէ՛ «Չունիմ», եւ այլ ինչ զայլմէ, թէ՛ «Չէ ընդ ինեւ»: Ջոր ազգակցեալ ըստ ստորիներգութեան ըստ սմին մասին ի մեծ Յայտնութեան վեհին Յովհաննու ասէ. «Փախեաւ երկին եւ երկիր ի մի սասանութիւն ի դիմաց Էին, եւ տեղի ոչ գտաւ»⁵. քանզի արդարեւ յաւետ անձկութեամբ ամփոփիւր երկիր ի բերումն բովանդակութեան հայրական գոյակից եւ արարչական Բանին հանգստեան: Իսկ դու ընտրեալ ի զարմէ եւ ի զանգուածէ մաքուր զաւակէ, սո՛ւրբ Աստուածածին, երկի՛ր անձնական բանական բուսոյն, եւ զգայական անդաստան կենացն հացի, եւ վառարան բորբոքման անշէջ կայծականն, եւ վա՛յր դալարաբեր ծոցածին ծաղկին, եւ ծա՛ռ երկնուղէշ անթարշամ խնձորոյն, եւ գործարան գոյութեան լուսոյ մարգարտին, եւ լեա՛ռն արձանունակ երկրալիւր վիմին, եւ ա՛յգ արփիասկիզբն աստեղն առաւաւտին, եւ յա՛րկ դիտապետին բանական հաւտին, եւ արքայարան լուսակերտ անմահ թագաւորին, եւ մա՛յր կաթնամատոյց բնաւից ստացողին եւ հա՛րսն սրբուհի Հարն Քրիստոսի:

Խնդա եւ ուրա՛խ լեր ձայնիւ երգութեան պատրաստաւղացս բան զովութեան քունդ երանութեան: Խրախացի՛ր ձայնիւ ողջունի Գաբրիէլեան աւետեացն, բերկրեա՛լդ ի կանայս, արժանաւոր բնակակի՛ցդ, տնկակցո՛րդ փառացն Աստուածութեան, իւղարանո՛ւ աւձելութեան Տեառն Քրիստոսի, քանզի նախ քան զծնելութիւն անձնաւոր Բանին առ ի քէն անթերի⁵ լրականութեամբ, տարաբնակ եւ ցայգապահեստ դասուցն հովուաց, ի մերձաւորագունիցն⁶ խմբից հրեշտակացն աւետարանեցաւ, յոր աւձեալ, ծնեալ⁷ ի քաղաք բնակութեան յարկի աւձելոյն Դաւթի արքայի: Վասն զի իբր հարազատ ժառանգ մեռելոյն անդ թաղեցելոյ ի նմին գուշակեցաւ: Իսկ

⁴ Ա նախահան

⁵ Ա անթերակի

⁶ Ա մերձաւորացն դասուցն

⁷ Ա ծնաւ

դու, Տիրուհի՛, թեպետե՛ս զՄինն յԵութենէն ծնար մարմնապէս, այլ կուսութեանդ քո մաքրութիւն Երրորդութեամբն վկայեցաւ, զի երեւեսցի եւ դաւանեսցի յայտնեցեալդ ի քէն Աստուած մարդացեալ: Քանզի. «*Հոգի Սուրբ եկեցէ ի քեզ*»⁸՝ Բնակողն մաքրութեան եւ Զարութիւն Բարձրելոյն, իբր հասարակաց հայրութեան, անհաղորդ նախակարութեան հովանասցի քեզ, սրբուհի՛, եւ որ յայտնելոցն է, ոչ սկսմամբ ի քոյդ ծննդեն նունի գտիրականն յորջորջումն: Այլ «*Տէր է՛, ըստ մեծին Դաւթի, անունն սքանչելի*»: Եւ կոչեսցի ըստ Գաբրիէլի ձայնիւ Դուկասու մարմինն անքակտելի որդի արարչութեան հայրենի ընտանութեանն. «*Եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի՛ ըստ մարմնոյ հար նորա, եւ թագաւորեսցէ տիրեսցէ մերովս ազգակցաւ այնր քաղաքի*»⁹, որոյ ուղիք փայտածեակք զանդէիցն ունէր լուսաշաւեղ գերընթացութիւնք⁸: Եւ կանգնեսցէ կառուցէ զխորանն Դաւթեան մարմնոյն եւ կամ զԱդամեան կործանմանն յայլմէ մարգարէ: Եւ վերստին շինեսցէ եւ արծարծեսցէ ի մի կոչումն միասնական եւ անեղծական նորոգութեան քրիստոսեան ուխտին դաշնաւորութեան, քանզի անդանար սկսեալ փրկական խորհրդոյն⁹ ազդումն ի նոյն կատարեցաւ:

Արդ, այսպիսեաց բազմաթիւ բարձրագոյն բարեաց ընդունակ եւ մատակարար, միայն¹⁰ սուրբ, մաքուր կուսութեան¹¹ անաղտ ինկարան: Վասն զի իբր ի ճնշումն խառնութեան ինկոյ զմոտոյ յոքունց ընտրելոյ արձակեցեր զբուրումն անուշահոտ սրբութեան: Վասն որոյ ամենայնիւ առցեալ վարուք գովութեան խնդա՛ յարակայ, անճառ ծնա՛ւդ անեղդ Աստուծոյ, քանզի ի նմին ստացելոյն ի քէն ինամաւղէ հրաշագարդ փառաւք համբարձար ի կատար ւարարման վերնայինն երկնի լուսապէս, եւ որպէս ի¹² թեթեւութեան հոգոյ սլացեալ՝ յիմանալիսն վերաշուէցեր եւ անհասանելի իմացական իշխանական ի բացահայեաց զգայութեան նկատման սրտի զանկապտելի վայելս անտեսիցն անձնապէս հոգիագրկեալ, ունո՛ղ Անեղծին փառաց ճոխութեան:

Ներբողեա՛լ ես, մաքուրդ փայլումն արարչակիր առաքինութեան¹³, սո՛ւրբ Աստուածամայր, որ սքանչելարուեստ հրաշիւք ներգործեալ ի մեզ՝ քեւ յեղանակեցաւ փոխատրեալ ընդ փոքուն զմեծն արգասիս: Վասն զի զանկոչն ի մարէ Մանուկ որդեպէս գերագոյնցեր, եւ իբր ըմբոնողաւք ձեռաւք բարձողաւք բազկաւք զանպարագիրն Էակ մարդացեալ ի համբոյր հպելոյ մատուցման շրթանց ողջագործեցեր, որով եւ յաղագս որոյ Աբբայ երկնաւոր մեր Հայր ժառանգակցապէս որդեգրեալ ի քեզ զԱստուած անուանակոչ քեւ¹⁴ արժանաւորեցար:

Բարեհամբաւեա՛լ ես, մաքրութեան շաւիղ նախընթաց կուսից, սո՛ւրբ Աստուածածին, որ զամենալրութիւն ունողին գոյից ի քեզ լցուցեր, ցուցեր նկատեալ աչաց մարդկան զանտեսն ի մարմնի:

Երանեա՛լ ես ի լեզուս անբիծս ընտրական շրթանց, սո՛ւրբ Աստուածամայր, որ ի դրութենէ խառնութեան քառից յեղանակել տարերաց՝ անտրոհ ի մասնէ հաղորդակ-

⁸ Ա վերընթացութիւնք

⁹ Ա խորհրդեացն

¹⁰ Ա միայնակ

¹¹ Ա կուսութեամբ

¹² Ա ի թեւս

¹³ Ա առաքինութեամբ

¹⁴ Ա անունակոչել փիւ. անուանակոչ քեւ

ցութեան հողածնաց հասարակականաց սրբապէս քրովբեական¹⁵ անշաղախութեամբ, ոչ բերողական ծանրութեան բնակակիր հոմաստեղծ կարեաց: Ուստի արագ ընթացիւք հետոց ի դէմս յարագեալ՝ անմատոյց արփին վերընծայեցար:

Խրախացի՛ր յաւետ հրճուանաւք, բերկրեա՛լո ի կանայս, որ իբր դժուարընդէլն խաչի դաստիարակութեամբ վարժողակիրթն կապաւ, զուգասնական կցորդակցութեամբ, միատեսակն¹⁶ ժուժկալութեամբ, մարմնատեսակն կենակցութեամբ զերաշխեպ վշտաց ծնիցելոյդ ի քէն մշտաչարչար մարմնամետ եւ ոգէնորոգ դատման փորձական անձնատոչոր տաւթանակ¹⁷ կենդանախարոյկ բոցով ընտրեցար եւ իբր որոջ անարատ քահանայական նուիրման առաւուտին կանխութեան ստուերագոյշ, սարաբոյս եւ ստեւագիսակ զեղմնաբարձ սպիտակափայլ ճգնաւորական հանդիսի, քան թէ ի սուր սուսերի մատեար: Քանզի. «Պատարագ Աստուծոյ բեկեալ ոգի»¹⁸ մարգարէին նախագրեցաւ:

Խրախացի՛ր համայն տարփանաւք, բերկրեա՛լ Տիրամայր, վասն զի ի կոյս եւ յանարար արգանդէ բանականաց մար երկրի սերմն առաջնաստեղծ¹⁸ Ադամայ նախնոյ ի բխեցելոյդ ի քէն տնկեցաւ ձեռաց, որով երկեակն երկնային¹⁹ Ադամ հոգեւոր ի կոյս եւ յանփորձ որովայնէ ազատ ի պարտեաց քունդ խորանէ ի քէն մարմնացաւ:

Խրախացի՛ր անբաւ բերկրանաւք, սո՛ւրբ Աստուածածին, որ յարէնս հասարակաց զանաւորինական հաղորդեցեր, եւ զաննմանն նմանեաց մսագանգուած մարդկութեանս ի չափ հասակի վայելչականի ստեղան Լիբանանու ըստ Սողոմոնի սահմանադրեցեր:

Խրախացի՛ր յողջոյն²⁰ նախընծայ երկնային աւետահնչող պատգամաւորին, սո՛ւրբ Աստուածածին, որ ի լոյս փառաց ցնծութեան շրջապատեցար, եւ երկրաւոր մարմնով երկնային գոլ գովեցար երգով, որով բարբառով, սրտիւ բոլորով, միշտ յիշատակի ի գիրս դրութեան աստուածապատում Աւետարանին, ի քէն վկայեցաւ բազմազնեայ գովեստ ի բանից մատուցեալ շրթանց առ Եղիսաբեթ՝ կարկառեալ զբանն յառակ տեսակի հանրական եկեղեցոյ՝ ծնողի մաքրութեան ի ջրոյն կենդանութիւն զայլաւստ լեզուս տոհմից եւ ազգաց: Եւ այսքանեաւք յաւետ շատացեալ շնորհաւք յիրաւի երգաբանեցեր հլու լսողի միում բարեկամի ի բ[ազ]մաց կուտելոց ի մի հաւանութիւն. «Ահա երանիցեն ինձ յայսմհետէ տիեզերք»²¹:

Արդ, ըստ բանի աստուածագրեցիկ քունդ բարբառոյ, սկզբնարար՛ր կուսից անարատութեան, ըղձական սրտիւ ի գուարթ լեզուս շրթանց բերկրելոց միշտ երանեսցէ զքեզ Եկեղեցի դասուցն անդրանկաց, որք անտեսականաւք²¹ աչովք պշելովք ախորժալուր եւ քաղցրանուագ արհնաձայնութեամբք զի քէն զմարմինն ի յանձնաւոր բանին միացեալ անանջրպետելի ի պատիւ Հոգւոյն ընդ Աստուածութեանն Հաւր փառատրեն:

¹⁵ Ա քրովբեատեսակ փխ. քրովբեական

¹⁶ Ա միատեսակն փխ. միատեսակն

¹⁷ Ա տաւթունակ փխ. տաւթանակ

¹⁸ Ա առաջնաստեղծն

¹⁹ Ա երկնայինն

²⁰ Ա ողջոյն

²¹ Ա անտեսական

Ուրախացի՛ր անճառ բերկրանալք ի բերան հոգենորոգ մեծի տեսանողին՝ ճշգրտաճառն պատմողի սրբոյն Ջաքարիայ, գովեա՛լ Աստուածածին, որ ի գործս²² հրաշից բանի սքանչելեաց վեհագոյն շնորհալք վերապատմեցար²³ եւ ծնար զմիայնակն Անդրանիկն²⁴ էութեան Աստուածութեանն: Եւ ոչ միայն որդւական խնճոյիք հարսնապէս սքաւսամբ ի գուշակ գալստեան յովանակակիր անմահ Փեսային՝ Որդիացելոյն քեզ՝ Նորոգողի Էմմանուէլի հրճուեալ խրախացար, այլ ծնաւ կաթնածիր Նորին իսկ՝ Ստեղծողին զքեզ՝ հասարակաց Փրկողի, մայր փոխանակ դաստեր դատուցն երջանկաց հաւասարակից Վերնոյն Սիոնի, քան թէ ստորանյնոյ Սաղիմայ յուսապճնեցար:

Երանեա՛լ ես, միայն մաքուր ընտրեալ ի զարմս կանանց կուսից, կա՛նք անձնատր կայից կենդանի կամաց Կենարարին: Վասն զի ոչ ընդ քեզ միայն, այլ ի քեզ, եւ ոչ միայն փարեցաւ բազմեալ, այլեւ բնակեցաւ տաղաւարեալ, եւ ոչ միայն միացաւ ի զանգուած մարմնոյ, այլեւ մարդացաւ ունողն կերպի ի քէն սկզբնելոյ: Եւ ոչ միայն զուգեցաւ մարդ ի յերկոցունց, այլեւ²⁵ ընկղմեցաւ թանձրայաւոյն ի պարզականումն: Եւ ոչ միայն միջնորդաւք անձին եւ մարմնոյ միատրեցաւ դիմատեսակեալ, այլ եռամասնեայ խառնութեամբ Աստուածութեամբն շաղկապեցաւ անորոշելի, մի Որդի մերովս ազգակցաւ ի սեփհականումն բնութեամբ ծնունդ, զանհաւասարն հաղորդելով աթոռակից աջական սիրոյ բարձրացեալն Հաւր մշտապաշտեցաւ:

Երանեա՛լ ես, միանգամայն եւ արհնեա՛լ, անժամանակն իսկութեան երջանի՛կ ծնող, որ ամենայնիւ զամենայնն յամենեցունց պսակեալ հոգեշունչ երգով ի քեզ ընկալար ոչ ի մասնէ, այլ ի լրութենէ, եւ ոչ հատմամբ, այլ հաստատութեամբ, եւ ոչ բաժանարար, այլ ամբողջապէս, եւ ոչ փոխմամբ, այլ փոխատրութեամբ, եւ ոչ ի ծիր սահմանի տեղոյ, այլ ամէնունող²⁶ եղակաց գոյից՝ զԲերողն բնաւից բերեալ յարգանդի, ոչ միայն ի տես նկատման աչաց նայեցեալ, այլեւ շաւշափեալ, եւ ոչ միայն ողջունեալ զԱնհուպն շրթանց եւ²⁷ ըմբոնեալ, եւ ոչ միայն զննելեալ²⁸ զհասարակաշէնն կազմեալ խորան մարմնացեալ Բանին, այլեւ անուանեալ ի կոչումն Յիսուս զՔրիստոսն Աստուծոյ: Եւ զԱնժամանակն աւուրց ընծայեալ աճման հասակի խոստովանեցեր՝ դաւանեալ զԾնիցեալդ ի քէն էութեամբ ընդ Աստուածութեանն ի տեսութենէ իմաստից փակեալ քննութեանց: Ուստի եւ Յակոբայ ի յար հանդիպութեան կոչման Իսրայելի խորհրդական մարտին հերքեալ ըմբոնեաց զունողն: Եւ ի կարծիս մտաց բերելով ընթացողին հասանել հետոց՝ կասեաւ նահանջեալ, որով եւ ի տարակոյս մտացն անձկութեան զերկայնմտութեան²⁹ ընկալաւ բարձրագոյն պատիւ: Քանզի ոչ աւտար յընտանութենէ³⁰ տնարիներեցելոյ³¹ ի քեզ խորհրդոյ բանն յարմարի:

²² Ա գործ

²³ Ա գերապատմեցար

²⁴ Ա անդրանիկ

²⁵ Ա այլ

²⁶ Ա ամենեցուն ունող փխ. ամէնունող

²⁷ Ա այլեւ փխ. եւ

²⁸ Ա զննեալ

²⁹ Ա զերկայնմտութեանն

³⁰ Ա յընտանութենէ

Երանեալ ի Տեառնէ եւ քարոզեալ ի մարդկանէ ընտրեալ՝ Տիրամայր, սո՛ւրբ Աստուածածին, որ վերին տեսչութեամբ նախապատուեալ³² ի վաղնջուց³³ գուշակմանէ ի նիւթս փայլողս հրալոյս մարգարտաց ծովածին քարանց փառաւորեցար անկէտ եւ անկշռական գովութեամբ: Ջի եթէ ի գունդս դասու սուրբ մարգարէիցն առածք բանաբարբառ պատգամացն, որ ի խրատականս դատման տանն Իսրայէլի, իբր ծննդոց որովայնից հոգեկիր հղացման երկունք ասացան, իսկ որ զԲանն անձնաւոր հայրենի բնութեանն ի սենեկի քում մաքրականի մարմնապէս բացածանուցեր յակնկալութիւն փրկութեան բարեաց՝ յուսացելոց ի քեզ յայտնելով, դու զո՞րպիսի զարժանաւոր պատիւ քումդ գովութեան վերընդունիցիս:

Որ սքանչելի ծագմամբն արփնարէն ծածկութիւ յանմատոյցն կարգեալ մատուցար գեղեցկագարդ գերունակութիւն եւ ի շուք շնորհի հոգեզարդ գեղոյ, քան թէ հանդերձից պարասքողեցար, արհնեալ՝ դու ի կանայս ի շրթունս մարգարէաբեր քահանայուհոյն՝ մարն Յովհաննու, ի դասուց բնածնաց հասարակական համագարմն³⁴ նմանացեղից ցանկալի երգովք ներբողեալ տաղաւք: Ջի եթէ բանականիս բնաւին գոյութիւն պատկեր Աստուծոյ Մովսէսի անդուստ կարգեցաւ, զնմանութիւն Էին սկզբնամեղն մարդ տարալքեալ տուաւորին անդրադարձեցոյց, ապա յաւետ առաւել առիթ պատճառի ծառայատիպն մարդակերպաւորի սուրբ Աստուածամայրս ընքեամբ³⁵ ըստ³⁶ պատկերին եւ յղացելովն զըստ նմանութեանն բերելով յընքեան³⁷ զուգասահմանեաց: Ուստի ի լրումն կատարածի այսր խորհրդոյ մարգարէին կտակ հաստատիւր. «*Եղիցի, ասէ, ի վերայ առն ձեռն քո եւ ի վերայ Որդւոյ մարդոյ ի քեզ խրախուսելոյ*»³⁸: Աջ քո Հայր անսկիզբն, Ծնաւդ եութեան Միածնիդ քո մարդացելոյ ի գարացուցանել եւ ի վկայել: Վասն որոյ իմաստնագիր ճառն քարոզչի մեծին Պաւղոսի, յարմարեալ ի սոյն կարգ, նախերգողի լոյս փառաց եւ կերպարան գոյութեան եւ նկարագիր արարչակցութեան³⁸ Հաւր՞ վկայեաց:

Եւ արդ, արդարաբար եւ արժանապէս հոգեշարժ քնարաւ զքեզ համբաւեմք, սո՛ւրբ Աստուածածին, որ բազմամասնեայ երգով միշտ արհնաբանիւր մարմնով եւ շնչով շնորհապատում վերանորոգեալ: Ի մարդկային զարմէ հրեշտակ երկնային, յեղծականաց սեռիցս անմահ սերովբէ՛, ի նիւթոյ հողոյ ոսկւոյ մաքրութիւն, ի ծովային բերմանց լուսոյ մարգարի՛տ, ի յԵսսեան բուսոյ³⁹ պտո՛ղ քաղցրութեան, ի յաւուրս նախնեացն ճի՛ռ արհնութեան, ցաւոյն հանդարտի ա՛մպ անձրեւաձիւր, արեւուն ծագման ա՛կն արփիափայլ, մերկացելոյ այգոյն ա՛ստղ առաւաւտի, գիշերային մթոյն խաւսնա՛կ բերկրանաց, արինի ստուերին տա՛ն ճշմարտաճառ: Սակս որոյ իբր զնիւթ գործաւնեայ այսքանեաց բարեաց, արհնեալ՝ ես դու ի կանայս, նախաստեղծին մերկա-

³¹ Ա տնարինելոյդ

³² Ա նախատպաւորեալ

³³ Ա վաղնջուցն

³⁴ Ա համագարմ

³⁵ Ա ինքեամբ

³⁶ Ա զըստ

³⁷ Ա յինքեան

³⁸ Ա արարչակցութեանն

³⁹ Ա լուսոյ

ցելոյ փա՛ռք անկապտելի, վշտացելոյ երկնաչարչար եւ անիծապարտ մաւրն յանցաւորաց սփոփի՛չ քաւութեան: Եւ արդ, ո՞ր բան բաղդատեսցէ զանհամեմատ⁴⁰ քո մեծութիւն գերահռչակել, Արարչի՛ն մայր, Անհասի՛ն ծնող, Անբաւի՛ն գրգարան, Ամենակալի՛ն յանձանձիչ, Հրաշակերտողի՛ն կերակրիչ, Փառագարդողի՛ն զգեցուցիչ⁴¹, Վերաւրհնելո՛յ⁴² ստացիչ: Ահա այսոքիւք ըստ քումդ բանի յիրաւի անարգել շրթամբք զքեզ երանեսցուք, մա՛յրդ Յիսուսի:

Աննիրհելի դիտմամբ լուսալիր աչաւք նկատեալ տեսա՛կ, կտա՛կ մակագիծ անեղծ պայմանաւ, սահմա՛ն յարակալ, կցո՛րդ մեծութեան, երկեակ այլայլմամբ կա՛պ պատկանակիր, վեհի՛ն պատկե՛ր կերպիւ կշռորդեալ, թեթեւ պարզութի՛ն հիւթիւ բաղկացեալ, տա՛ռ տարբերական ուշիւ ձեւացեալ, տումա՛ր տենչալի անսխալ դրոշմեալ⁴³, մատեան մեծութի՛ն⁴⁴ շնորհիւ նկարեալ, նամա՛կ ընտրութեան բանիւ բարդեցեալ, արձա՛ն անձնական իմաստիւ զաւդեալ, կնի՛ք մատանոյ Տերամբ կերպագրեալ⁴⁵: Զգե՛ստ լուսանիւթ երկնից արքային, ալթո՛ց սրբութեան անմահ բնակողին, յա՛րկ վայելչութեան անեղ շինողին, առի՛թ մարդկութեան Վեհի բնակութեան⁴⁶, պատճա՛ռ պատշաճից անպատկառ ճգնութեանց, արինա՛կ ուղղութեան այլայլակ վրիպութեան, անպակաս աճելութի՛ն լրման թերութեան, իսկուհի՛ երկնային կենդանեաց աշխարհին, մասնակի՛ց շնորհընկալ հայրական գթութեանն, անպարտակիրն ազգակցութեան երկնի՛չ վերստին, անամանակն արգանդի ծանուցո՛ղ ծննդեանն⁴⁷:

Վասն զի զՀաւրն լուսոյ հարազատ Որդի ի ստորինս կոյս աշխարհի կաթամբ մայրենի ջամբեալ դիեցուցեր, եւ որպէս թելովք խնամական պահպանութեան զպարունակողն պարփակեցեր: Եւ ըստ նմանութեան արագման աւդային թռչնոյ ի յանցաւորաց ստի փոխեցար, եւ երեւեցար քարոզեալ ամենեցուն Ունաւդին Ունաւդ, եւ ի հասարակաց մարմին գոյութեան մաքրական ոգի ծանուցար, եւ նմանակից լուսարփի ամպոյ երկնային ցաւոզվն լցար: Եւ հողեղէն հաստուած երկրային վերնալուսնեան փաղփաղմամբ փայլեցեր, եւ ի կանանց ազանց կերպակից արուսեկին⁴⁸ տեսակաւ տեսար, եւ զննելի բնութեամբ մարդկայնոյ յանճառաշնորհ խորհուրդ ծածկեցար, եւ ի Ստեղծողէն քո եւ ի հրեշտակաց հպատակարէն ձեւով պաշտեցար, եւ ի Հաստողէն ծագաց աշխարհի մայրարինակ անուամբ ձայնեցար, եւ մեղուցելոյ կնոջն առաջնոյ անյանցական զաւակ զովեցար, եւ ամենայն անբժաց ընտրութեան պսակ սրբութեան միշտ դաւանեցար, եւ իբր անարատ եւ հանդարտ երինջ արարչաւանդ լծոյն մատուցար, եւ իբր յաւանակ կամաց Անբաւին Աստուածութեամբն հետեւեցար, եւ ի խորոց ծովէ աշխարհէ⁴⁹ շուշանական շաւղաւք ամբարձար, եւ իբր ի դժնեայ փշոց խստու-

⁴⁰ A զանհամեմատող

⁴¹ A սփոփիչ փխ. զգեցուցիչ

⁴² A վերօրհնելոյն

⁴³ A չիք տումար տենչալի անսխալ դրոշմեալ

⁴⁴ A մեծութեան

⁴⁵ A կերպադրեալ

⁴⁶ A Վեհին բնութեան փխ. վեհի բնակութեան

⁴⁷ A ծննդեան

⁴⁸ A արուսեկին

⁴⁹ A աշխարհի

թեանց ի յաշխարհի զբաղմանց ծաղկեցար, եւ իբր ի դառն արմատոց երկրէ քաղցրաճաշակ պտուղ յայտնեցար, եւ Երրորդութեանն անտես թաքնութեան խորհրդակից սիրոյ կոչեցար, եւ ծածկարան հաւաքման Բանին լուսարկու ձորձով ձգեցար, եւ անքակ Էին տէրութեան սահման սկսման վերակարգեցար, եւ ի սրբասնեալ միջոց քո ստեանց զանկէտն ի ստաշխին ծրար ծպտեցար⁵⁰, եւ ի կուսական քում բարունակէ զանմահարար ողկոյզն աճեցար⁵¹, եւ ի միջնորդ փրկութեան կենաց երկոցունց սքանչելապէս համարձակեցար, եւ համոզիչ ի խաղաղութիւն մրրկածուփ շարժմանց կացուցար, եւ խրախակից վերնոցն բարձրութեան անկապտելի անուամբ պատուեցար:

Արդ, յայսքանս եւ ի սոյնպիսիս, եւ յես ընտրելական երգս բանահիւսից գերահռչակեալ ես, վսեմական վարուց նախընթաց յառաջաշաւի՛ղ, սո՛ւրբ Աստուածածին: Վասն զի որպէս երեւեալն ի քէն Միածին՝ անդրանիկ բնութեան⁵² Հաւր, սկիզբն ասի հետեւմանց խաչունակ մահակիր ճգանց, նոյնպէս⁵³ երանեալդ եւ բարեբանեալ⁵⁴ գերարիւնակ ցուցման տեսակի աստուածակրան կարգաց ծագեցար: Քեւ զանմատոյցն հուր կիզանող անապական ծասկմամբ⁵⁵ ծախեցաք, քեւ զարագեալն ի թելս աւդայինս ի քառընթաց կենդանիս տեսաք, քեւ զանկցորդն տեսականաց ի մարդկային կերպի⁵⁶ նկատեցաք, քեւ զգովեալն բարձող մեղաց իբրեւ զգառն վայելեցաք, քեւ զդատեալն ի չարագործաց իբրեւ զԱստուած երկրպագեցաք, քեւ զանձանաւթն Հաւր տէրութիւն ազգակցապէս արհնաբանեցաք, քեւ զմուրհակ պարտուցն անիծից ի յաւազանին ջուր ընկղմեցաք, քեւ զանտեսիլն աչաց հրեշտակաց տղայական տիովք զգուցեցաք, քեւ զանսահման Բանին բնութիւն ի հասարակածին տիպ համբուրեցաք, քեւ զԱղամն նոր հոգեղէն ի չափ հասակի առաջնոյն տեսաք, քեւ զարեգակն արդարութեան կենցաղակից մեզ կցորդեցաք, քեւ զանժամանակ Բանին էութիւն ի Դաւթայ սկզբնաբանեցաք, քեւ զանպարագիր մերոյս պատկերի մեզ նմանակիր հանգունակեցաք: Արդ, յայսքանեաց սրբազնականաց մասանց ճառելոց դու միայնակ պատճառ, մաքրութեան տաճար անարատ կուսից, նպատակ կրանից Տիրամայր, սո՛ւրբ Աստուածածին:

Քանզի թէ չէր ի քէն աճեցեալ ուղեշն երկնային, չէր պտղաբերեալ զանճաշակելին ի հաղորդ շրթանց, եւ թէ չէր երեւեալ արդարութիւն⁵⁷ Հաւր ի յերկնից, չեւ եւս էր բուսեալ սկզբնաւորն ի յանսկզբանն. եւ թէ չէր յղացեալ յանփորձականդ քում արգանդի, չեւ էր մարմնացեալ. եւ թէ չէր յայտնեալ մերով բնութեամբս, չեւ էր շաշափեալ. եւ թէ չէր ըմբոնեալ անհասն իմաստից, ոչ էր երեւեալ. եւ թէ չէր կրեալ ի գիրկս բարձողաց հողեղէն բազկաց, ոչ էր ծանուցեալ. եւ թէ չէր համբուրեալ երկրաւոր շրթամբք, ոչ էր ճառեցեալ. եւ թէ չէր հետեւեալ ի մարդկան ընթացս, ոչ էր քարոզեալ Էակն ի յէիցս. եւ թէ չէր թափեալ եղն անապական ի վեհագունէն, ոչ էր զմեզ անծեալ. եւ թէ չէր խառնեալ զմերս ընդ իւրումն, ոչ էր մկրտեալ. եւ թէ չէր խրախուսեալ մարդն ի յերկնայ-

⁵⁰ Ա ծպտեցեր

⁵¹ Ա աճեցեր

⁵² Ա բնութեանն

⁵³ Ա սոյնպէս փիս. նոյնպէս

⁵⁴ Ա բարեբանեալդ

⁵⁵ Ա ծաքմամբ

⁵⁶ Ա կերպ փիս. կերպի

⁵⁷ Ա արդարութիւնն

նում⁵⁸, ոչ եւս էր սրբեալ. եւ թէ չէր խոնարհեալ ի բարձրութենէ ընտանի փառացն, ոչ էր համբարձեալ ի ստորիցս առեալն:

Իսկ մարմնացաւ, որքան մարդացաւ. իսկ յայտնեցաւ, որպէս ծանուցաւ. իսկ աւետարանեցաւ, որպէս փառատրեցաւ. իսկ մաքրեցաւ, որպէս երգեցաւ. իսկ մկրտեցաւ, որպէս վկայեցաւ. իսկ պատմեցաւ, որպէս ճառեցաւ. իսկ տնանկացաւ, որով ճոխացաւ. իսկ հնազանդեաց, որով պաշտեցաւ. իսկ երկրպագեցաւ, որով խոցեցաւ. իսկ կենդանացաւ, որով թաղեցաւ. իսկ պատուեցաւ, որով պատժեցաւ. իսկ ամաչեցոյց, որով պատկառեցաւ⁵⁹. իսկ բերկրեցոյց, որով տրտմեցաւ. իսկ զգեցոյց, որով մերկացաւ. իսկ ողջացոյց, որով բեւեռեցաւ. իսկ կանգնեցաւ, որպէս անվտանգ. իսկ սլացաւ, որպէս վերնային. իսկ թռեաւ որպէս հոգեղէն. իսկ ծածկեցաւ, որպէս անքնին. իսկ փախեաւ, որպէս եւ զանհաս. իսկ ի⁶⁰ յամպս երկնից եղ զգնացս. իսկ զովեցաւ, որպէս Միածին. իսկ բոսորաբուղիս կայլակաւք ներկաւ, իսկ անկից վիրացն խոցմամբ հարցաքննեցաւ. իսկ ի վեհից անմահ հրեշտակացն հաւատացաւ. իսկ յաղթող մրցման եւ մարտի փառատրեցաւ. իսկ դատաւոր արդարակշիռ ամենայն ազգաց վերապատմեցաւ: Քանզի ի քէն հիմնադրեաց սկիզբն մարդեղութեան անեղն իսկութիւն, եւ ի քոյղ ընտրութեան⁶¹ անպատումդ շնորհ զայս ամենայն անփոխանորդելի պարգեւականացս ձիրս ընկալաք, եւ քեւ ամենայն այս պատրաստութեամբ⁶² բարբաւստութեան բազմերանեան յուսոյ հրճուանաց մեզ հանդերձեցաւ:

Արդ, զամենայն փառս երանական լուսոյ նշուլից վերնոց եւ ներքնոց ծածուկ խորհրդոց բազմարուեստ գործոց մեծ յարիւնուածոց նոր արարածոց՝ անճառ շինուածոց սուրբ Եկեղեցոյ ամենայարմար ձեռն Արարողին ի քէն ծնիցելոյ եւ մարդացելոյ դասուցն⁶³ երջանկաց, եւ մայր հիմնադրութեան հաստման Եկեղեցոյ, եւ ծնաւդ անարատ Բանին Աստուծոյ: Վասն որոյ յաւետ արհնութեամբ միշտ պսակեցցես զնուիրեալ տեղի սրբութեան յարկի լուսոյ տաճարի քոյղ խորանի ըստ քումդ կոչման, որով պարգեւեալ սմա՝ մատուցցես ձիրս շնորհաց սրբոյն Սիոնի եւ Բեթղեհեմի, ուստի արժանացցուք ընդունել սովաւ մասն փրկութեան յաւուրն յարութեան մեծի յայտնութեան փառացն անեղծութեան Փրկչին անմահութեան՝ ի քէն ծնիցելոյ եւ մարդացելոյ Միոյ Աստուծոյ՝ Տեառն Յիսուսի: Եւ իբր զպատճառ սկզբնաշաւեղ այսքանեաց բարեաց ի տոյն կամարի գեղապճնելոյ զքեզ պատուեսցուք, անժամանակ էին բարձրացեալ ծնաւդ:

Գերագանցեալ լդ ի կշիռ չափոյ երկրածին բնութեանս, եւ անդր քան զքրովբեական նախադասութիւնն վերանորոգեալ, իսկուհի՝ վեհիցն պայծառութեան եւ ի վայելչական պատիւ պաշտեցեալ եւ պարունակեալ իբր զԱրարչի, Նորին մարմնարան եւ տեսաւորի՝ չ, վասն մեր, հայցե՛մք, աղաչեա՛ զառ ի քէն Ծնեալդ:

Ըրպէից յոգնաթիւ մասանց բերկրութի՛ւն, եւ անստուեր հանդիսի տարեկան

⁵⁸ Ա յերկնայնումն

⁵⁹ Ա պատկառեաց

⁶⁰ Ա չիք ի

⁶¹ Ա ընտրութիւն

⁶² Ա պատրաստութիւն

⁶³ Ա մարդացելոյ դասուց... շարունակում է ըստ կերպի մերոյ սրբոյ միայնոյ... մինչեւ մաքրութիւն կուսից եւ սկզբնաշաւիդ...: Այնուհետեւ սրբոյ միայն ճշմարտի տաղաւար...

տարփման եւ անճառ փառաց ծագամբ ծածկեցեալ եւ անմահացեալ անորիշ հպմամբ մերձաւոր անմատոյց լուսոյ, խոստման ապառնեացն յուսացելոց ի պարտուց մահու ազատեա՛ զի քեզ յուսացեալքս:

Ի յերկրաւորացն⁶⁴ նիւթոց ազգակից անկցորդ վարուց մարդկայնոց, հաղորդ հաւասարութեան կրանից հրեշտակաց, որոց անգնին աչաց նկատման քեւ յայտնեցաւ կերպի ծառայի: Վասն որոյ տեսին զԱնկէտն սկսեալ եւ երանեցան առաւելապէս, քան ի ծածկեալ դարս ամանակաց⁶⁵ լռելոց: Ուստի եւ հայցեմք ի քէն աւգնութիւն կենաց փրկութեան եւ նորոգութեան:

Գլխաւորեալ աստանաւր ի քեզ զիմանալեացն փարթամութիւն. յառաջադրեալ համարձակեցար հասեր ի բարձունս, իբր անընդունակ ապականութեան եւ մահու լուծման եւ ցուցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկրին, արգահատեա՛ մեզ ողորմութիւն, քաւութիւն⁶⁶ մեղաց:

Ունո՛ղ հրճուանաց անթիւ իրախութեանց աստուածային տնկոյ⁶⁷ տիրական տնաւրէնութեանն, անդաստա՛ն աճման, որոյ ստեղունք շառաւիղաց բարձրութեան ոստոցն, զմաքրոցն միտս յընքեան բերելով, բնակեցուցանէ ի վիճակ հանգստեան հայրենի աւթեւանին: Արդ, ողորմեա՛ մեզ դաւանողացս զքեզ, Տիրուհի՛ եւ Աստուածածի՛ն:

Ընտեմք ի քէն, սրբուհի՛, աղերսիւ բանի ի ձեռն կենդանակիս⁶⁸ մերոյ գոյութեան, միա՛յն երանեալ եւ բարեբանեալ, Հաւրն հաճութեամբ հովանաւորեալ, Աստուծոյ ծնաւղ եւ Հոգւոյն ըստ կերպի մերոյ Սրբոյ միայնոյ, բարձրեալն Աստուծոյ արարչաստեղծեաց: Վասն որոյ երգեսցուք քեզ՝ բերկրեցելոյ, զսովորակի աւրհնութիւնն ընդ կարապետին ընտրեալ ծնաւղի՝ պարկեշտանունն Եղիսաբեթի. «Աւրհնեալ էս դու ի կանայս»⁶⁹, իբր եւ զգլուխ նոցին պանծանաց եւ պայծառ պսակ:

Պսակ կուսութեան մաքուր հարսնութեան, պսակ ընտրութեան անփորձ գովութեան, պսակ անեղծութեան լուսոյ նմանութեան, պսակ շնորհանորոգ Էին ծնելութեան, պսակ երանական Բանին Հաւր մայրութեան, պսակ սուրբ պանծանաց կենացն բարձրութեան, պսակ պայծառափառ վարուց իմաստութեան, պսակ տիրապատուաստ երկնահանճար⁶⁹ գիտութեան, պսակ պիտանական զարդու Եկեղեցւոյ, պսակ պաշտելութեան մանկանց Նոր Սիոնի, պսակ յոքնկար⁷⁰ յարփից եւթնից փայլեալ, պսակ ընդունական վերնոցն ազգակցութեան, պսակ ամբծութեան շաւղացն արդարութեան:

Արդ, ամենեցունց վերակարգելոցս բաղձալի եւ երանելի թուոցս այսոցիկ բնակարան եւ ընդունարան ընտրական եւ հաճոյական կամաց Անբախն զքեզ խոստովանիմք երկրաւոր ծնունդք ստորաստեղծակն Ադամայ: Որոց անհամար եւ անթիւ ա-

⁶⁴ Ա յերկրաւորաց

⁶⁵ Ա ամանակացն

⁶⁶ Ա քաւութեան

⁶⁷ Ա տնկոյն

⁶⁸ Ա կենդանականիս

⁶⁹ Ա երկնահանճարն

⁷⁰ Ա յոքնակար

զանց ամրական եւ պահպանական պարիսպ կառուցար: Քանզի արժանահայց⁷¹ եւ ամենագար բարեխաւսութիւնդ քո միշտ ապաւինիմք խնամեալք եւ հանգուցեալք իբր ընդ հովանեաւ պաշտպանութեան ամուր պատուարի Տերամբ հաստատելոյ:

Պատուար պճնայարիւնի զանազանից մաքրագարդականաց յարմարեալ, պատուար հրապարփակ անմատոյց հինից ընդդիմացողաց, պատուար բոցանշոյլ անհուպ եւ անհաս մարտուցման դժնեայ դրժողաց, պատուար ամենահրաշ, գոր մեծն Եզեկիելի⁷² ստուերականն արիւնակի աղիսեալն մտիւ զքոյդ ճշմարտագրեաց: Պատուար շրջապարիսպ հիմանն անշարժութեան, պատուար ամրակառոյց քաղաքին լուսոյ Ստեղծողին եւ Ստացողին հրեշտակաց: Քանզի զԱստուած ծնար ի մարմնի, որով եւ Սիովն զմարմնաւոր բնութիւնս մեր ի հոգի: Վասն որոյ արիւնեացն զաստուածարարեալդ քո կուսութիւն շրթունք ընտրելոց, որով արդարապէս ի քեզ ընծայեալ զբան պատմողին եղեր մեր աւգնական եւ ի խստութենէ փորձութեանց ուղիսից հեղեղաց անձկութեան աւուր՝ տուն ապաւինի: Քանզի ի քէն զմարմինն ընդ Աստուածութեանն միաւորեալ միշտ խոստովանին վերինք եւ ստորինք, եւ ի թեւս պահպանութեան լայնատարած մաղթանաց քոյոց աղաթից յուսամք փրկիլ:

Եւ արդ, ընկալցի՛ս զբան երգութեան բերանոյ շրթանց մերումս լեզուի քեզ ի հաճութիւն, մաքրութի՛ն կուսից եւ սկզբնաշաւեղ, սրբոյ միայն ճշմարտի տաղաւա՛ր անաղտ, վերանկարեա՛ զառ ի յաւազանէն անախտ արգանդէ կարդացեալս անուն ի գիր մատենի վերին դպրութեանն եւ զերգագրութիւն սակաւամասնեայ մերս գովեստի անջնջական տառ արձանացո փոխատրեալ մարմնոյս զմրաշարս գիծ, եւ զգալական շնչոյս զբանիս պատկեր, զի իբր ի գոյից երկուց զուգելոց ի մի խառնութիւն միոյ կենդանոյ միշտ փառատրեացիս սովին արիւնութեամբ, իբր յանեղծական փառաբանաւղէ, եւ ի ձեռն զարեղ քոց խնդրուածոց պարզեւեսցես մեզ անդատապարտ համարձակութիւն յատենի մեծի եւ ահաւորի սուրբ Դատաւորին: Ձի ընտրութեամբ եւ անբիծ վարուք եւ ուղիղ դաւանութեամբ, հաւատոցն հաստատութեամբ գտցուք արժանի եւ անդ հանդիպել քումդ երանութեան՝ ընծայիք բանից փառաւորելով ընդ քեզ եւ ընդ քոյսն յանդիման դիմաց պաշտելի եւ պսակելի քում աստուածափայլ եւ լուսանշոյլ մեծապայծառութեանդ զեութիւն անքակ եւ անքննելի Սուրբ Երրորդութեանն ի միում Տերութեան եւ արարչութեան, որում վայելչական պատիւ եւ գովեստ անդադար երգոց այժմ եւ միշտ եւ յաւիտեանս⁷³. ամէն:

Բարեխաւսութեամբ ծնաւղի եւ մար Քո ողորմեա՛ գրողի սորա Յովանիսի եւ հարն իմ Մովեղնի⁷⁴:

⁷¹ Ա յարժանահայց

⁷² Ա Եզեկիելի ի փխ. Եզեկիելի

⁷³ Ա յաւիտենից յաւիտեանս փխ. յաւիտեանս

⁷⁴ Ա չիք Բարեխաւսութեամբ ծնաւղի եւ մար Քո ողորմեա՛ գրողի սորա Յովանիսի եւ հարն իմ Մովեղնի

**ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ ՊԱՏԱՍԽԱՆԻՈՅ ՍՈՐԻՆ ԸՆԾԱՅԱԿԱՆ ԳՐՈՅ
ԵՐՁԱՆԻԿ ԵՒ ՇՆՈՐՀՐԿԱԼ ՏԵԱՌՆ⁷⁵ ՍՏԵՓԱՆՈՍԻ, ՅԵՐԵՍԱՅ
ՆՄԻՆ ՀՈԳԻԱԲՈՒՂԽ ՎԱՐԴԱՊԵՏԻ**

Շնորհակիք Էին եւ Հոգւոյ Նորա ընդունակ, ընտրեալ եւ ներանձնացեալդ այցելու, ըստ հայցման հաճութեան քարեւէր կամաց երջանկիդ եւ գրութեան⁷⁶ նամակի ձերում պատճենին յարինեալ՝ շարադրեցի ի վեհիդ գովեստ հիսուածս բանից: Եւ նկարեցի մատուցի ի գեղ պատկերի դիմաց սոփեստիդ սպիտակափայլ լուսափառ դաշտի քարտինիդ, եւ արձանացուցի ի շուրթն գրչիս՝ անշունչ խաւսողիս, անքայլ ընթացողիս, անձայն հնչողիս, անդուլ պատմողիս եւ անսայթաքելի քարոզչիս զանուն տենչալի ձերումդ կոչման, տէր Ստեփանոս՝ լերինդ Մոկաց հզար դիտապետ, մնալ յարակայ ի սոյն համառատագիծ մատենի յաւուրս անթիւս եւ յամս հազարաւորս իմով սակաւամասնեայ իմաստիւ: Ես Գրիգոր՝ յետին վարդապետաց եւ կրսեր բանասիրաց, որդի դստեր եղբար հար⁷⁷ Անանիայ հոգեզարդ եւ հմտավարժ փիլիսոփայի, եւ ըստ վարուց⁷⁸ մաքրութեան կրանից յոյժ հոչակելոյ: Եւ ընծայեցի քումդ եկեղեցեաց զայս նուէր քարեաց բանից ցանկալեաց: Արդ, վայելեալ յայսմ բերկրութեան յամեալ եւ յարակայեալ ի հոգեւոր հրճուանս աղաւթից: Եւ ընկալեալ խառնեցես ի յոքնահամբար զարդս ամենագեղս երկնային զանձուցդ՝ զտարազ տեսակի տաղիդ: Եւ յիշատակեցես զանուն իմ զտրուպ ի գաւիթ սենեկի անձկութեան սրտիդ, եւ նորոգեալ⁷⁹ զմերս ի ձերումդ սուրբ խորանի աստուածաբնակի հանդէպ սեղանոյդ արարչընկալի զերկոսին զմեզ ի միում կարգի՝ զիս եւ զեղբայր⁸⁰ իմ զանդրանիկ զՅովհաննէս՝ ցանկալի անուն, հանճարեղ գիտական եւ իմաստասէր առաւել, քան զիս, որպէս ընդ Սեբի⁸¹ երգագրի անուն Պամփիլեա: Եւ յամենայնի կեցցեն մեր անձինք ընդ քեզ, որպէս եւ քոյդ հոգի միացեալ ընդ մեզ միջնորդաւ բանին էութեան ի մի հալոց ընտրութեան քրայի, անբաժին տեսմամբ եւ անորիշ շնչով, եւ անայլայլակ խորհրդով, եւ անանջրպետ կամաւք եւ խարսխեալ, հաստատեալ եւ հիմնաւորեալ խորհրդովք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

Այլ քանզի անընդէլ գոյով տեսութեամբ բաղձալի վայրիցդ եւ սրբոց խորանացդ, զթերին լրութեան եւ զպակասն աճելութեան յարմարման գրութեանդ աղերսեմ շնորհել: Ո՛վ, որք հանդիպիք այսմ զեղապաճոյճ, հոգեզարդ եւ շնորհալի իմաստութեան գրոցս, զեղկելի գրողս եւ զճնողսն իմ եւ զեղբարսն աղաչեմ յիշել ի Տէր վասն սիրոյն Քրիստոսի, որ յոյսն է ամենեցուն⁸²:

*Հրատարակության պատրաստեց՝
Մարթա Արաբյանը*

⁷⁵ Ա չիք տեսն

⁷⁶ Ա դրութեան

⁷⁷ Ա հարն

⁷⁸ Ա չիք վարուց

⁷⁹ Ա նորոգեա

⁸⁰ Ա զեղբայրն

⁸¹ Ա սեբի

⁸² Ա զԹումա կրանաւոր եւ զճնողն իւր եւ զեղբարն իւր յիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ փիւ. Ո՛վ, որք հանդիպիք... մինչեւ որ յոյսն է ամենեցուն